

Ատոմ Շ. Մարգարյան
Տնտ. գիտ. թեկնածու

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ

Հնարավորությունների և մարտահրավերների
սահմանագծին*

Բանալի բառեր– Եվրասիական միություն, Մաքսային միություն, ընդհանուր շուկա, ինտեգրացիա, մաքսատուրք, կանոններ, հնարավորություն, մարտահրավեր, սահմանափակում:

Մուտք

ՀՀ Նախագահի 2013 թ. սեպտեմբերի 3-ի հայտարարությամբ Հայաստանի Հանրապետությունը սկիզբ դրեց քիչ անց՝ 2014 թ. մայիսի 29-ին Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի ձևավորած կառույցին՝ Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵՏՄ) անդամակցության գործընթացին:

Որոշման շարժառիթն, անշուշտ, **քաղաքական** էր՝ թելադրված Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ անվտանգության ապահովման նկատառումներով: Ու թեև ԵՏՄ-ին անդամակցությունը երկարաժամկետ գործընթաց է ենթադրում, այդուհանդերձ, որոշվեց այն իրագործել առաջանցիկ տեմպերով: 2014 թ. դեկտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետությունը իրավաբանական տեսանկյունից ավարտեց Եվրասիական տնտեսական միությանն իր անդամակցության ընթացակարգը, քանի որ այդ պահին արդեն Եվրասիական եռյակի անդամ երկրները վավերացրել էին կառույցին Հայաստանի միանալու պայմանագիրը, և 2015 թ. հունվարի 2-ից դարձավ նրա լիիրավ անդամը:

*Հողվածն ընդունվել է տպագրության 20.12.2014: Հիշեցնում ենք, որ «Քննարկումներ» բաժնում հրատարակվող հոդվածների դրույթները կարող են չհամընկնել խմբագրության դիքթորոշմանը: Խմբ.:

1. ԵՏՄ ձևավորման աշխարհաքաղաքական ենթատեքստը

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, 2014
2 (ՃԲ) փաթեթ, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր

ՎԷՆ համահայկական համադր

2014 թ. հոկտեմբերի 10-ին, աշխարհաքաղաքական բավականին բարդ պայմաններում, Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ԵՏՄ-ին անդամակցելու պայմանագիրը, ինչը մեր երկրի արտաքին պարտավորությունների ողջ ինստիտուցիոնալ համակարգի արմատական վերակառուցման ու վերախմբավորման լուրջ մարտահրավերներ է պարունակում: Ուկրաինայի արևելքում ծավալվող պատերազմական գործողությունների և Արևմուտքի կողմից Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող տնտեսական կոշտ պատժամիջոցների խորապատկերին Հայաստանի Հանրապետության քաղաքական ղեկավարության եվրասիական ընտրությունը կարող է լուրջ փորձություն դառնալ ավելի քան երկու տասնամյակ տևող ծանրագույն մարտահրավերներին դիմակայող հայության համար: Խորհրդային Միության փլուտակների վրա հաճոնող Եվրասիական տնտեսական միությունը ըստ էության տնտեսաքաղաքական ռևանչի նախագիծ է, որի խորքային նպատակը այդ կառույցի հիմնական խաղողրդի՝ Ռուսաստանի Դաշնության կողմից նախկին գործընկերներին իր ազդեցության տիրույթում պահելու և Արևմուտքի հետ ունեցած դիմակայության մեջ նրանց հնարավորությունները իր խնդիրներին ծառայեցնելու անթաքույց մարտահրավերի մեջ է: Մինևույն ժամանակ Հայաստանի Հանրապետության եվրասիական ընտրությունը ըստ էության վերջակետ է դնում մեր երկրի՝ մեկը մյուսին հաջորդած վերնախավերի կողմից առերևույթ հռչակված ու տարբեր արդյունավետությամբ կիրառվող փոխլրացնելիության (complementarism) քաղաքականությանը:

Հենց սկզբից պետք է արձանագրել, որ Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցությունը զուտ տնտեսական հաշվարկներով ու բացառապես շուկայական նպատակահարմարությամբ պայմանավորելն ուղղակի անշնորհակալ գրադմունք է: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ ԵՏՄ-ին ՀՀ անդամակցության փաստն արձանագրվել է «Ուկրաինայում ու նրա շուրջ» իրադարձությունների խիստ անբարենպաստ զարգացումների պայմաններում, երբ ԵՏՄ գլխավոր լոկոմոտիվը՝ Ռուսաստանի Դաշնությունը, ենթարկվում է միջազգային կոշտ պատժամիջոցների: Ու չի էլ երևում, թե Ռուսաստանն ու իր դաշնակիցները տեսանելի ապագայում և ավելի երկարաժամկետ հեռանկարում ինչպիսի վնասներ կկրեն նախատեսվող տարաբնույթ սահմանափակումներից: Ուստի «Եվրասիական քառսի նախանշանները»¹ հետզհետե զարգանալով, դառնում են աշխարհաքաղաքական նոր «սառը պատերազմի» հզոր ազդակներ:

Սակայն ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության ռիսկերը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական բնույթի են: Խոսքն, իհարկե, առաջին հերթին դարաբաղյան խնդրի չլուծվածության պայմաններում որևէ ինտեգրացիոն կազմավորման հարելու նպատակահարմարության մասին է: Գաղտնիք չէ, որ Ռուսաստանը նշված խնդրում ունի իր արմատական շահերն ու հետաքրքրությունները, որոնք սկզբունքորեն տարբեր են հայկական կողմի շահերից: ԵՏՄ գլխավոր խաղողրդը նախկին խորհրդային երկրների միջև բախումներին ու հակամարտություններին, այդ թվում՝ դարաբաղյան խնդրին նայում է գլխավորապես Հարավային Կովկասը երկարաժամկետ հեռանկարում ամբողջովին իր վերահսկողության տիրույթ վերադարձնելու տեսանկյունից: Այս առումով չպետք է բացառել, որ Հայաստանի անդամակցությունից հետո Ռուսաստանը գայթակղություն ունենա, իբրև խայծ օգտագործելով դարաբաղյան խաղաքարտը, Ադրբեջանին ևս հարկադրել մտնելու ԵՏՄ տարածք:

Այսպես թե այնպես ԵՏՄ-ին իր անդամակցության գործընթացի համատեքստում ՀՀ-ն հարկադրված է եղել լայնածավալ օրենսդրական և ինստիտուցիոնալ

1 «ՎԷՆ» 2014, N3 (47), էջ 3-8:

փոփոխություններ իրականացնել ԵՏՄ անդամ երկրների սահմանած խաղի կանոնների տիրույթ փոխադրվելու համար: Անշուշտ, այդ հանգամանքը ՀՀ միջազգային պարտավորությունների (քազմակողմ և երկկողմ) իրականացման տեսակետից լուրջ ռիսկեր է պարունակում: Այստեղ խոսքն առաջին հերթին Հայաստանի՝ որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ երկրի, միջազգային պարտավորությունների կատարման մասին է: Այս տեսակետից լուրջ վերանայման են ենթակա մաքսային, հարկային, լիցենզային, ներդրումային, վարչարարական բնույթի բազմաթիվ դրույթներ:

Պետք է փաստել նաև, որ առաջատար արևմտյան տերություններն ու հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգները խիստ անհանդուրժողաբար են վերաբերվում Ռուսաստանի առանցքի շուրջ նախկին ԽՍՀՄ երկրների միավորման ցանկացած փորձի: Այս տեսակետից հատկանշական է 2012 թ. ԱՄՆ նախկին պետքարտուղար Հիլարի Բլինթոնի հայտարարությունը. «Այժմ տեղի են ունենում այդ տարածաշրջանի սովետականացման ուղղությամբ քայլեր: Դա հավանաբար այլ կերպ կկոչեն՝ լինի դա Մաքսային միություն, Երասիական միություն և այլն: Սակայն չխաբվենք: Մենք գիտենք, թե իրականում որն է դրա նպատակը, և մենք պետք է ձգտենք հակազդել դրան կամ ամբողջովին կանխել ԽՍՀՄ վերականգման փորձերը»²:

Պետք է նկատել, որ ԵՏՄ կայացմանը խոչընդոտող գործոնների մեջ Արևմուտքի կոշտ հակազդեցությունը թեև լուրջ դերակատարություն ունի, սակայն միակը չէ: Այն լրացվում է ներելրասիական հակասություններով: Հատկապես ելրառուսական և ղազախական ղեկավարների կողմից մտահոգություններ կան, որ վաղ թե ուշ Մոսկվան, օգտագործելով նոր կազմավորված միության մեջ իր գերիշխող դերը, կարող է սահմանափակել իրենց ինքնիշխանությունը, ինչպես նաև անարդարացիորեն ավելի մեծ մասնաբաժին կորզել ելրասիական «կարկանդակից»:

Հետզհետե ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ նոր ձևավորված «ելրասիական կոնգլոմերատում» հարաբերություններն այնքան էլ հարթ ու անամպ չեն ընթանալու, քանզի այդ կազմավորման «շոգեքարշ» երկրում դեռևս չեն հաստատվել ժողովրդավարական մշակույթի ու քաղաքական հանդուրժողականության իրողությունները: Ռուսաստանը շարունակում է մնալ կոշտ ավտորիտարիզմի սկզբունքներով կառավարվող ու կայտերապետական նկրտումներ դրսևորող երկիր, և նման պայմաններում դժվար թե ԵՏՄ գծով իր գործընկերների հետ հարաբերվի որպես սուվերեն ու իրավահավասար պետությունների:

2. ԵՏՄ ստեղծման տնտեսաքաղաքական շարժառիթները

Ներկա աշխարհակարգի իրողություններն այնպիսին են, որ որևէ երկիր իր բնակչության կենսագործունեության բնականոն ընթացքն ու արժանապատիվ գոյությունն ապահովելու համար կամա թե ակամա հարկադրված է հարելու որևէ տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծի և դրա հիման վրա ձևավորելու իր ռազմաքաղաքական անվտանգության, տնտեսության մրցունակության, սոցիալական զարգացման վեկտորները: Սակայն երկրների ու ժողովուրդների այդ միանգամայն բնականոն ցանկությունները բախվում են աշխարհաքաղաքական վերաձևումների ներկա հանգրվանի կոշտ ու դաժան իրողություններին: Այս պայմաններում քիչ երկրներ կան, որոնք, չեզոքություն պահպանելով, կարողանում են հավելյալ շահ կորզել իրենց բացառիկ կարգավիճակից:

Ելրասիական տարածքի հետխորհրդային երկրների ինտեգրացման ջատագովը, որքան էլ տարօրինակ է, համարվում է Ղազախստանի նախագահ Նուր-

² Clinton vows to thwart new Soviet Union. <http://www.ft.com/home/europe>

սուլթան Նազարբաևը: «Հասունացել է նոր միջպետական միավորման հենքի վրա մեր երկրների հարաբերությունների որակապես նոր մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ հիմնված կամավորության և իրավահավասարության սկզբունքների վրա: Այդ միության հիմքը պետք է կազմեն վերապետական մարմինները, որոնք պետք են լուծեն երկու հանգուցային խնդիրներ՝ միասնական տնտեսական տարածքի ձևավորումը և համատեղ պաշտպանական քաղաքականության ապահովումը»³, - հայտարարել է Ն.Նազարբաևը տակավին 1994 թ. մարտի 29-ին Մոսկվայի համալսարանի ուսանողների հետ հանդիպման ընթացքում և այդ շրջանից սկսել է հետևողականորեն առաջ մղել եվրասիականության գաղափարը:

Վերոնշյալ համատեքստում դեռևս 1995 թ. ԱՊՀ երեք երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի ղեկավարները (Բ.Ելցին, Ն.Նազարբաև, Ա.Լուկաշենկո) ստորագրեցին միասնական Մաքսային Միության ստեղծման վերաբերյալ համաձայնագիրը: Սակայն մաքսային սահմանները բացելու և ապրանքների քիչ թե շատ ազատ տեղաշարժի ապահովելու համար պահանջվեց ևս ... 15 տարի: 2000 թ. հոկտեմբերի 10-ին տնտեսական ինտեգրացման դոկտրինայի շուրջ համախմբվեցին ԱՊՀ 5 երկիր՝ Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը՝ ստեղծելով նոր տնտեսաքաղաքական կազմավորում՝ Եվրասիական տնտեսական ընկերակցությունը, որին քիչ ավելի ուշ հարեց Ուզբեկստանը: Սակայն, այդ փխրուն ու հեղհեղուկ «կոնգլոմերատը» այդպես էլ չդարձավ տնտեսական լուրջ կազմավորում և ժամանակի քննությունը չբռնեց:

2008-2009 թթ. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ավելի ակնհայտ դարձավ, որ նախկին ԽՍՀՄ երկրների միջև քիչ թե շատ բնականոն տնտեսական ու առևտրային կապերի զարգացման համար անհրաժեշտ են միասնական խաղի կանոններ և մաքսասակագնային կարգավորման հստակ գործառնություններ իրականացնող միջպետական համակարգող մարմիններ: Այս պայմաններում 2010 թ. հունվարի 1-ից ԱՊՀ երեք երկրների միջև վերջապես գործի դրվեց միասնական Մաքսային Միության պայմանագիրը՝ Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի և Բելառուսի մաքսային սահմանների միավորման ճանապարհով: 2010 թ. հուլիսից այդ երեք երկրների տարածքներում սկսեցին գործել միասնական Մաքսային օրենսգիրքը և նրա գործողությունն ապահովող ևս 17 համաձայնագրեր:

Անշուշտ, կարելի է ԵՏՄ կազմավորման շարժառիթների հիմքում տեսնել նախկին խորհրդային հանրապետությունների տնտեսական ու առևտրային կապերի վերականգման ձգտումը և նրանցում և նրանցում իշխող քաղաքական ռեժիմների «հոգեհարազատությունը»: Ի վերջո, ավելի քան երկու տասնամյակների դեգերումներից ու քաղաքական վայրիվերումներից հետո, նախկին ԽՍՀՄ-ի ժառանգորդ պետությունների մեծ մասում ձևավորված կառավարման համակարգերը և նրանցում իշխող վերնախավերը հանդիսանում են նախկին գերկայսրության կենտրոնացված ու ավտորիտար քաղաքական մշակույթի կրողները: Այդ տեսակետից Մոսկվայի հովանու տակ նոր տնտեսաքաղաքական կազմավորման ձևավորումը պատահական լինել չի կարող, քանզի տնտեսական շահերի համադրումը առանց քաղաքական, ռազմական կամ մշակութային-քաղաքակրթական բաղադրիչների պարզապես դժվար է երևակայել:

Թերևս գաղտնիք չէ, որ, որոշ բացառություններով, նախկին ԽՍՀՄ-ի երկրների մեծ մասի քաղաքական ուժի կենտրոնների ձևավորման և ուղղորդման հիմնական ազդակները բխել են Կրեմլի քաղաքական շահադրդումներից: Մյուս կողմից, նախկին ԽՍՀՄ-ի «արբանյակների» քաղաքական վերնախավերը իրենց իշխանության վերարտադրության ու պահպանման հարցում Մոսկվայի աջակցությունը դիտարկել են որպես էական, իսկ որոշ երկրների պարագայում՝ որոշիչ

3 http://eurasia.org/nazarbaev_msu_1994/

գործոն: Ահա թե ինչու հատկապես Բելառուսի և Ղազախստանի՝ ավտորիտար իշխանության հակված ղեկավարների համար Եվրասիական տնտեսական միության գաղափարը ի սկզբանե այդքան հոգեհարազատ և ընդունելի էր: Նույնը թերևս վերաբերում է նաև չափերով ավելի փոքր, սակայն հիշյալ քաղաքական մշակույթից սկզբունքորեն չտարբերվող կառավարած ունեցող ավելի փոքր երկրներին (Հայաստան, Ղրղըզստան, Տաջիկստան, Ուզբեկստան):

Այն, որ ԽՍՀՄ փլուզումից հետո մի քանի տասնամյակ տևած հակասական վերափոխումներից և, ըստ էության, հանրային կյանքի ժողովրդավարացման նախագծերի հիմնովին տապալումից հետո այդ երկրներում վերստին պահանջարկված է կենտրոնացված ու քաղաքական մենաշնորհի վրա հիմնված կառավարակարգը, միանգամայն օրինաչափ պետք է համարել: Թերևս սա է պատճառը, որ ԵՏՄ կազմավորման ակունքներում կանգնած առաջնորդները, հստակ գիտակցելով մոտալուտ սպառնալիքներն ու մարտահրավերները, այդուհանդերձ հակված են արագացնելու ինտեգրացման գործընթացները: Այս տեսակետից հատկանշական է Ն. Նազարբաևի հետևյալ դիտարկումը. «Իհարկե, համաշխարհային շուկաների անկայունությունը, պատժամիջոցային քաղաքականությունը, առաջատար համաշխարհային տերությունների միջև վստահության թուլացումը, ռազմաքաղաքական վիճակի սրացման սպառնալիքները կազդեն Եվրասիական տնտեսական միության կայացման գործընթացի վրա: Մենք այդ մարտահրավերները հաշվի ենք առել», - ԵՏՄ զագաթաժողովից անմիջապես հետո նշել է Ղազախստանի ղեկավարը: Բայց, այդուհանդերձ, նա հավելել է, որ իր երկիրը չի հրաժարվի «բազմավեկտոր քաղաքականությունից»⁴:

3. ԵՏՄ տնտեսական շրջանակը կամ չափազանցված ակնկալիքները

Փաստորեն Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսը, Ղազախստանը և Հայաստանը 2015-ից դուրս են գալիս տնտեսական ինտեգրման նոր մակարդակ: Հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը, ինչը ապրանքների ազատ շարժի հետ մեկտեղ ենթադրում է ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ, ինչպես նաև՝ տնտեսության հիմնական ոլորտներում (էներգետիկա, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ) համաձայնեցված ու համակարգված քաղաքականություն: Ըստ էության իրականացվում է մի տնտեսական միասնացման նախագիծ, որը պետք է ԱՊՀ տարածքում ձևավորի ընդհանուր շուկա՝ Եվրոպական ընդհանուր շուկայի համանմանությամբ: Ամբողջության մեջ ԵՏՄ-ն 170 միլիոն բնակչություն ունեցող տնտեսական տարածք է, որի հանրագումարային տարեկան համախառն ներքին արդյունքը կազմում էր 2,4 տրիլիոն դոլար (համաշխարհային ընդհանուր թողարկման 3,7 տոկոսը), արդյունաբերական արտադրանքը՝ 1,4 տրիլիոն դոլար, արտաքին առևտրային շրջանառությունը՝ 933 միլիարդ դոլար (համաշխարհային առևտրի 2,2 տոկոսը)⁵:

ԵՏՄ երկրները համաձայնեցրել ու պայմանագրորեն ամրագրել են ընդհանուր շուկա մուտք գործող ապրանքներից գանձվելիք մաքսատուրքերի ամբողջական չափաբաժինները: Ըստ այդմ ԵՏՄ-ի տարածք ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի մեջ Հայաստանի մասնաբաժինը կկազմի 1.13 տոկոս, Բելառուսի բաժինը 4.65 տոկոս, Ղազախստանինը՝ 7.25 տոկոս, Ռուսաստանինը՝ 86.97 տոկոս: Գումարային արտահայտությամբ Հայաստանը մաքսատուրքե-

4 <http://www.unn.com.ua/ru/news/1419406-n-nazarbayev-kazakhstan-ne-vidmovitsya-vid-ba-gatovektornoyi-zovnishnoyi-politiki>
5Տևս <http://eaeunion.org/#about>

րի ընդհանուր կաթսայից տարեկան կստանա շուրջ 400 միլիոն դոլար: Ծառայությունների ոլորտում Հայաստանը ԵՏՄ պայմանագրային պարտավորություններին կմիանա ընդհանուր հիմունքներով, իսկ առևտրի ոլորտում նախատեսված է աստիճանական (2-7 տարվա ընթացքում) անցում ԵՏՄ-ի միասնական մաքսային սակագներին:

Այսպես կոչված՝ «զգայուն» ապրանքների նկատմամբ (752 անուն), որոնք առաջին անհրաժեշտության սոցիալական նշանակության ապրանքներ են, առաջիկա տարիներին կգործի մաքսազերծման ու հարկադրման արտոնյալ ռեժիմ: Այդ ապրանքատեսակների հանդեպ կկիրառվեն ԵՏՄ մաքսատուրքի դրույքաչափերից ցածր դրույքաչափեր: Նման ապրանքատեսակներն են՝ միս և մսից ենթամթերք, կաթ, կաթնամթերք, բրինձ, արևածաղկի ձեթ, մանկական սնունդ, անասնակերեր, ծխախոտի հումք, նավթ, նավթամթերք, հանքահումքային մթերք, այդ թվում՝ անօրգանական քիմիական միացություններ, օրգանական քիմիական միացություններ, դեղագործական մթերք, պարարտանյութեր, մաքրող միջոցներ, կաշվեհումք, բամբակյա և քիմիական թելեր, քիմիական գործվածքներ, մարդատար ավտոմեքենաներ, ավտոբուսներ: Բացի այդ, Հայաստանը մինչև 2018 թ. զրոյական մաքսատուրքեր կկիրառի ներկրվող բենզինի նկատմամբ, իսկ միասնական մաքսային սակագնին անցում կկատարի 2020-ին: Նույն սկզբունքով կկարգավորվի նաև մաքսատուրքն օրգանական և ոչ օրգանական քիմիայի, դեղորայքային արտադրանքի, ներկերի, կենցաղային քիմիայի, կաշվի և նմանատիպ այլ արտադրանքների համար:

Սկզբունքորեն ԱՊՀ երկրների շուկաները նախկին խորհրդային երկրներին, այդ թվում՝ Հայաստանին, արտադրական մշակույթի և տեխնոլոգիական համադրելիության առումով համանման պայմաններ են առաջարկում: Ուստի ԵՏՄ ընդհանուր շուկան այլ հավասար պայմաններում կարող է թույլ տալ իրագործել արտադրության, առևտրի, էներգետիկայի, տրանսպորտի ու ենթակառուցվածքների ոլորտում փոխշահավետ ներդրումային ծրագրեր: Այդուհանդերձ, ԵՏՄ անդամ երկրների ձևավորած Մաքսային Միության ռեալ գործողության ոչ երկար փորձը ցույց է տալիս, որ բավականին բարդ է թեկուզ ապրանքների շարժի այնպիսի միասնական կանոնների գործադրումը, որը անդամ երկրներին զերծ կպահի հնարավոր կոնֆլիկտներից ու հակասություններից: Խոսքը հատկապես վերաբերում է Ռուսաստան-Բելառուս և Ռուսաստան-Ղազախստան առևտրատնտեսական բախումներին ու պարբերաբար բռնկվող կոնֆլիկտներին:

Փաստը մնում է փաստ, որ մի շարք ապրանքների գծով նշված երկկողմ հարաբերությունները մշտապես հանդիսացել են լարումների, փոխադարձ մեղադրանքների ու տարաձայնությունների դրդապատճառներ: Մասնավորապես, վերջին տարիներին մշտական տարաձայնություններ են հարուցել Ռուսաստանից դեպի Բելառուս նավթի ու մյուս էներգակիրների նկատմամբ մաքսատուրքերի սահմանման և գանձման ընթացակարգերը, իսկ հակառակ ուղղությամբ՝ սննդամթերքի (մսամթերք, կաթնամթերք) նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Նույնատիպ խնդիրներ եղել են ղազախական ածխի ու մետալուրգիական արտադրանքի՝ դեպի ռուսական շուկա արտահանման սահմանափակումների հետ կապված:

Իրանով հանդերձ, ԵՏՄ ձևավորմամբ անդամ հանդիսացող երկրները կարող են տնտեսական գործարքների ու ներդրումների ոլորտներում միմյանց հետ խոսել հասկանալի լեզվով: Համենայնդեպս, ԵՏՄ երկրների հիմնական տնտեսական ցուցանիշները միմյանց մոտ կամ համադրելի են բնակչության կենսամակարդակի, գործարար միջավայրի որակի, կառավարման ու հարկահպատակության մշակույթի, ինստիտուտների զարգացման, վարչարարության և բազմաթիվ այլ պարամետրերով: Ինչպես նշյալ երկրների պաշտոնական վիճակագրության, այնպես էլ անկախ միջազգային փորձագիտական կենտրոնների գնահատական-

ները հաստատում են այդ իրողությունները:

Փաստենք, որ բնակչության մեկ շնչի հաշվով եկամտի առումով ԵՏՄ երկրների մեջ առաջատարը Ռուսաստանի Դաշնությունն է, որտեղ 2013 թ. այն կազմել է 12700 դոլար, ինչը եկամուտների համաշխարհային դասակարգման դասիչում այդ երկրին դասում է բարձր եկամուտ ունեցող երկրների խմբին⁶: Մեկ շնչի հաշվով եկամտի ցուցանիշով Ռուսաստանը հիշյալ դասակարգման ցանկում տեղ գտած աշխարհի 188 երկրների շարքում զբաղեցրել է 56-րդ տեղը: Սակայն պետք է նկատել, որ եկամուտների այդ հարաբերականորեն բարձր մակարդակին Ռուսաստանը հասել է նավթի և մյուս էներգակիրների կայուն բարձր գների հաշվին: Ինչ վերաբերում է ԵՏՄ անդամ մյուս երկրների՝ մեկ շնչի հաշվով եկամուտներին, ապա պատկերն այսպիսին է՝ Ղազախստան՝ 9700 դոլար, Բելառուս՝ 6530 դոլար, Հայաստան՝ 3720 դոլար⁷: Եկամտային այսպիսի տարբերությունները ցույց են տալիս, որ Ռուսաստանը ԱՊՀ երկրների ու հատկապես ԵՏՄ անդամ երկրների համար շարունակում է մնալ տնտեսական միգրանտների ձգողականության կենտրոն, ինչը արտագաղթի հզոր հարուցիչներից մեկն է:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների միջև առևտրի կառուցվածքն ունի գլխավորապես հումքային ուղղվածություն և համապատասխանում է զարգացող երկրների տարածաշրջանային ինտեգրացիոն կազմավորումների առևտրի սկզբունքներին: Այսօրինակ ապրանքաշրջանառության կառուցվածքը նվազեցնում է ԵՏՄ անդամ պետությունների տնտեսությունների փոխլրացման մակարդակը, իջեցնում է միմյանց նկատմամբ տնտեսական հետաքրքրությունը, իսկ հաճախ նույնիսկ նույնատիպ ապրանքների շուկաների համար պայքարում դարձնում հակառակորդներ: Համաշխարհային մրցունակության գեկույցի տվյալները վկայում են, որ ԵՏՄ երկրները 2014–2015 թթ. գլոբալ մրցունակության համաթվով զբաղեցնում են միջինում 63-րդ տեղը, ինչը ավելի բարձր է, քան համաշխարհային միջին ցուցանիշը (72)⁸: ԵՏՄ երկրների շրջանակներում մրցունակության տեսակետից ամենալավ դիրքն ունի Ղազախստանը (50-րդ տեղը աշխարհում), երկրորդը Ռուսաստանն է՝ 53-րդ տեղ, և վերջում Հայաստանը՝ 85-րդ տեղ⁹: Ընդ որում, եթե Ղազախստանի և Ռուսաստանի տնտեսությունների մրցունակությունը գերազանցում է համաշխարհային միջին ցուցանիշը համապատասխանաբար 22 և 19 կետով, ապա Հայաստանը հետ է մնում համաշխարհային միջին ցուցանիշից 13 կետով:

Մրցունակության հենասյուների վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՏՄ երկրները ունեն աշխատանքային ռեսուրսների շուկայի հարաբերական բարձր արդյունավետություն. նրանցում բավական զարգացած են բարձրագույն կրթությունը և մասնագիտական փորձառությունը, ինչպես նաև նկատվում է մակրոտնտեսական կայունություն և ենթակառուցվածքների զարգացում: Այս ցուցանիշների առումով ԵՏՄ երկրներից երկուսը՝ Ռուսաստանը և Ղազախստանը, առաջ են անցել համաշխարհային միջին ցուցանիշից, իսկ Հայաստանը հետ է մնում վերջիններից շուրջ 10 կետով: Սակայն ինստիտուտների զարգացման մակարդակով, ապրանքային շուկայի արդյունավետությամբ, ընկերությունների մրցունակությամբ և հատկապես՝ ֆինանսական շուկաների զարգացման մակարդակով ԵՏՄ երկրները հետ են մնում համաշխարհային միջին մակարդակից: Մի կողմից՝ ԵՏՄ երկրները առանձին ցուցանիշների գծով գրավում են բավականին բարենպաստ դիրքեր (Ռուսաստանն ու Ղազախստանը շուկայի չափերի առումով համապատասխանաբար գրավում են 7-րդ և 52-րդ տեղերը), մյուս կողմից՝ որոշ ցուցա-

6 Տե՛ս <http://gtmarket.ru/ratings/rating-countries-gni/rating-countries-gni-info>

7 Տե՛ս նույն տեղում:

8 Տե՛ս The Global Competitiveness Report 2014–2015, World Economic Forum 2014, p 104–391.

9 Գլոբալ մրցունակության համաթվով Բելառուսի տնտեսությունը երբեք չի վարկանշավորվում, ուստի ուսումնասիրություններն անցկացվել են միայն երեք երկրների՝ Հայաստանի, Ռուսաստանի և Ղազախստանի տվյալների հիման վրա:

նիշներ (նորաստեղծական ներուժ, առողջապահություն, տարրական կրթություն և այլն) գլոբալ մրցունակության առումով գտնվում են ցածր մակարդակի վրա¹⁰:

Անշուշտ, ԵՏՄ առաջնորդների մակարդակով հնչող հայտարարություններում նորաստեղծ ինտեգրացիոն կազմավորման վերաբերյալ լավատեսական շեշտադրումներն ու հավաստումները գերակշռող տեղ ունեն: Դրանք մի կողմից հիմնված են ԽՍՀՄ-ից մնացած նախկին տնտեսական կապերի ու անձնական շփումների ներուժը օգտագործելու հնարավորությունների, մյուս կողմից՝ միասնական մշակութային, լեզվական, հանրային ռեսուրսների ու քաղաքական վարքագծի կադրայինների ընդհանրությունների վրա: Բայց արդյո՞ք հնարավոր կլինի գտնել այդօրինակ հնարավորությունների և առկա մարտահրավերների միջև ցանկալի հաշվեկշիռը, մանավանդ, որ ԵՏՄ կազմավորման և նորամուտի պայմանները ամենևին բնականոն չեն, ավելին, դրանք ընթանում են ծայրահեղ բարդ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական պայմաններում:

4. Պատժամիջոցների մահակը և շեղանկյունային հարվածները

Եվրասիական տնտեսական միության կազմավորմամբ նրա ճարտարապետներն ու հատկապես Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հույս ունեն այն դարձնել համաշխարհային տնտեսաքաղաքական ուժի կենտրոն, որը կկարողանա հավասարը հավասարի հետ մրցակցել արդեն կայացած և ողջ աշխարհի քաղաքակրթական ու տնտեսական զարգացումներին տոն տվող մյուս կենտրոնների հետ: Անկասկած, Մոսկվա-Մինսկ-Աստանա եռանկյունու խաղորդների համար ԵՏՄ ձևավորման որոնումների ու փնտրտուքների մեջ ամենայն հավանականությամբ ոչ վերջին դերն է խաղացել նախկին ԽՍՀՄ-ի «բեկորները» մեկ միասնական կազմավորման մեջ ներառելու մտադրությունը: Սակայն որքան ուժգին է նման ցանկությունները, նույնքան ավելի ուժեղ են դրանց հակազդող գործոնները:

Խոսքը առաջին հերթին այսպես կոչված Արևելյան գործընկերության, Եվրասոցացման և Եվրոպական հարևանության նախագծերի մասին է, որոնք ԱՄՆ մատուցմամբ ու ֆինանսական զգալի օժանդակությամբ իրականացնում է Եվրոպական միությունը՝ նպատակ ունենալով ԱԳՀ երկրների հնարավորինս մեծ խմբի հեռու պահել Եվրասիական ինտեգրման տարատեսակ նախագծերից: Սակայն դրանցից յուրաքանչյուրը դեմ է առել Մոսկվայի կոշտ դիմակայությանը, ուստի պայքարը Ռուսաստանը գոտևորող նախկին ԽՍՀՄ «արբանյակների» համար հետզհետե սրվել է, իսկ որոշ դեպքերում հանգեցրել է արյունալի բախումների:

Ուկրաինայում ծավալված քաղաքացիական պատերազմը ռուսաբնակ Դոնբասի և մնացած Ուկրաինայի միջև այդօրինակ հակամարտությունների գագաթնակետն է: Ինչպես Ռուսաստանի կողմից Դրիմի անեքսիայի փաստը, այնպես էլ Դոնբասի համար պատերազմը Արևմուտքի ու հատկապես ԱՄՆ-ի համար շատ հարմար առիթ է Ռուսաստանի և անուղղակիորեն՝ նաև՝ նրա դաշնակից երկրների նկատմամբ տնտեսական կոշտ պատժամիջոցների ռեժիմ կիրառելու, այդ կերպ նրանց ծնկի բերելու՝ թվում է, թե անվրեպ մարտավարությունը գործի դնելու համար: Այս իրողությունը վաղուց արդեն աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կոշտ դիմակայության տեսք է ստացել և սպառնում է պայթեցնել ոչ միայն տարածաշրջանի, այլև համաշխարհային տնտեսությունը:

Հիշյալ դիմակայության մեջ Արևմուտքի կառավարող շրջանակները, ըստ էության, գործի են դրել բոլոր միջոցները՝ և՛ ԱՄՆ դաշնային պահուստային համա-

10 Տե՛ս նույն տեղում:

կարգի գործիքակազմը, և՛ դոլարի հետ կատարվող ձեռնածությունները, և՛ նավթի գների կտրուկ նվազեցման թակարդը, և՛ ռուսական խոշոր ընկերությունների դեկլավարների ու գործարարների նկատմամբ արևմտյան երկրներ այցազրային սահմանափակումները, և՛ «սառը պատերազմի» տեղեկատվական զինանոցին բնորոշ քարոզչական տեխնոլոգիաները: Այս ամենը, բնականաբար, հանգեցրել է տնտեսական և սոցիալական իրավիճակի կտրուկ լարման առաջին հերթին Ռուսաստանում: Իհարկե, կիրառված պատժամիջոցներից կորուստները երկակի են: Վնասներ կրում են ոչ միայն Ռուսաստանն ու նրա դաշնակիցները, այլև Արևմուտքը: Տարբեր գնահատումներով այդ կորուստները միայն եվրոպական երկրներում անցնում են 40 միլիարդ եվրոյից¹¹:

Մինչդեռ, կիրառվող պատժամիջոցներից Ռուսաստանի թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի կորուստներն իսկապես աննախադեպ են: Ռուսաստանի տնտեսության ձկնկերը արևմտյան պատժամիջոցների տակ, անշուշտ, միայն արտաքին ազդակներով չի պայմանավորված: Դրա պատճառներն ավելի խորն են ու համընդգրկուն: Ռուսական տնտեսությունը կառուցվածքային առումով խիստ խոցելի է: Այն գլխավորապես հիմնված է հումքի ու հատկապես էներգակիրների արդյունահանման և վաճառքի վրա, ուստիև մրցունակության առումով խիստ հետ է մնում աշխարհի առաջատար երկրներից: Ռուսաստանի տնտեսությունը բնութագրվում է նաև ներդրումային ու գործարար միջավայրի թուլությամբ, տեխնոլոգիական հետամնացությամբ, թույլ կարգավորման ինստիտուտներով, դատական ու կառավարման համակարգերի կոռումպացվածությամբ, ներդրողների և սեփականատերերի իրավունքների թույլ պաշտպանվածությամբ ու դրանց հաճախակի ռոտնահարմամբ, հատկապես՝ պետության կողմից:

Կարելի է փաստել, որ Ռուսաստանի տնտեսության արտաքին-թվայն կայունության տակ ֆինանսական լուրջ ռիսկեր և անհաշվելի խոռոչներ կան: Տարիների, նույնիսկ տասնամյակների ընթացքում ռուսական խոշոր ընկերությունները հսկայածավալ պարտքեր ու վարկային միջոցներ են ներգրավել արևմտյան բանկային կառույցներից ու կապիտալի շուկաներից: Որոշ գնահատումներով՝ այդ գումարների և կուտակված պարտքերի ընդհանուր մեծությունը 2014 թ. նոյեմբերի դրությամբ հասել էր 600 միլիարդ դոլարի սահմանագիծը: Ընդ որում՝ հասել էր դրանց զգալի մասը (150-200 միլիարդ դոլար) վերադարձնելու և պարտքերը մարելու ժամանակահատվածը: Բնականաբար, Արևմուտքը, Ռուսաստանի համար փակելով առաջին հերթին նոր վարկային միջոցներ ներգրավելու խողովակները, ռուսական մասնավոր ընկերությունների ու բանկերի համար լուրջ խնդիրներ ստեղծեց հատկապես արևմտյան դոնորների ու վարկատուների առաջ ստանձնած պարտավորությունների կատարման տեսակետից: Այս հանգամանքն էլ անսխաղեպ դեֆիցիտ ստեղծեց արտարժույթային միջոցների շուկայում՝ նպաստելով ռուբլու ազատ անկմանը:

Արևմտյան պատժամիջոցների հարվածի առաջին ալիքը Ռուսաստանի Դաշնությունում զգացվեց կապիտալի աննախադեպ փախուստի տեսքով, երբ ֆինանսական գործարքների կոշտ սահմանափակումներ սկսեցին գործադրվել մեկ տասնյակից ավելի ռուս խոշոր գործարարների և ռուսական խոշորագույն բանկերի նկատմամբ («Վնեշտորգբանկ», «Սբերբանկ», «Գազպրոմբանկ», «Ռոսսելխոլգբանկ»): Միայն 2014 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՌԴ-ից կապիտալի փախուստի և ընկերությունների շուկայական կապիտալացման անկման կորուստները տարբեր գնահատումներով հասել են 180 միլիարդ դոլարի սահմանագիծը¹²: Որպես հետևանք՝ կտրուկ նվազել են արևմտյան ընկերությունների ներդրումները ռուսական տնտեսության մեջ, հատկապես էներգետիկայի, ենթակառուցվածքային և ռազմավարական նշանակության մի շարք այլ ոլորտներում:

11 Տե՛ս <http://ria.ru/economy/20140913/1023955181.html>

12 Տե՛ս http://www.ng.ru/week/2014-04-13/8_economics.html

2014 թ. երկրորդ կեսից Արևմուտքը սկսեց գործադրել թվում է թե անվրեպ կերպով խոցող այնպիսի հարված, ինչպիսին միջազգային նավթային բորսաներում նավթի գների անկումն է: Այսպես կոչված՝ թերթաքարային նավթի մեծ պաշարների արդյունահանումը ԱՄՆ-ի նավթահորերից և նավթ վաճառողների համաշխարհային շուկայում նոր խաղորդների մուտքը նրանում կտրուկ խախտեցին հավասարակշռությունը: Դա մի քանի ամսվա ընթացքում գրեթե կրկնակի նվազեցրեց նավթի գինը: Սա արդեն ուժգին հարված էր ռուսական տնտեսությանն ու հատկապես ռուսական ռուբլուն: Ռուբլու արժեզրկումը հետզհետե սկսեց խուճապային երանգներ ստանալ և այդ երկրի դրամական իշխանությունների լուռ համաձայնությամբ վերածվեց իսկական ֆինանսական «ցնցման»: Ռուբլու արժեզրկումը ավելի քան 40 տոկոսով նշանակում էր, որ եթե ՌԴ Կենտրոնական բանկը լուրջ միջամտություններ չանի և չկայունացնի ռուսական արժույթը, ապա ֆինանսական փլուզումն ու գների անկանխատեսելի թռիչքն անխուսափելի են:

Բնականաբար, ռուբլու արժեզրկումը մեծ հարված հասցրեց նաև ԱՊՀ գծով Ռուսաստանի գործընկերներին, այդ թվում և՝ Հայաստանին: Նախ՝ կտրուկ կերպով արժեզրկվեցին Ռուսաստանում աշխատող հայաստանցիների վաստակները, և ապա՝ շատ ավելի մեծ չափով (ավելի քան մեկ երրորդով) կրճատվեցին դեպի Հայաստան փոխանցվող մասնավոր տրանսֆերտները: Այս հանգամանքն, իր հերթին, մեծ հարված էր հայկական արժույթին՝ դրամին: Այն, ինչ սկսվեց Հայաստանում 2014 թ. նոյեմբերի 20-ից հետո, իսկական աղետ էր ինչպես երկրի ողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին միավորների ու շարքային քաղաքացիների համար:

Հայաստանում գրանցված ֆինանսական խուճապի հարցում, անշուշտ, մեծ «լուծման նեղակետ» կրակի վրա յուր ավելացնող սպեկուլյանտները, տասնյակ մասնավոր բանկերը, խոշոր փողատերերը, որոնք, օգտվելով հայկական և ռուսական արժույթների փոխարժեքների տարբերություններից, տասնյակ միլիոնավոր դոլարներ դուրս բերեցին հայկական շուկայից (որոշ գնահատումների համաձայն՝ հաշված օրերի ընթացքում երկրից դուրս են բերվել ու Ռուսաստան տեղափոխվել ավելի քան 400 միլիոն դոլարի կանխիկ միջոցներ): Եվ այս ամենը՝ ՀՀ Կենտրոնական բանկի թողտվությամբ կամ լուռ համաձայնությամբ: Դա պետք է հանգեցնեի ու հանգեցրեց արտարժույթի սուր դեֆիցիտի և որպես հետևանք՝ դրամի փոխարժեքի աղետալի անկման: Դրամն արժեզրկվեց ավելի քան 30 տոկոսով: Եվ միայն ամենաբարձր քաղաքական մակարդակով կատարված միջամտությունից հետո հնարավոր եղավ կանխել դրամի փլուզումը:

Հատկանշական է, որ ռուբլու արժեզրկումը **շեղանկյան էֆեկտով** հարվածեց ԱՊՀ բոլոր երկրների ազգային արժույթներին: Վրացական լարին, օրինակ, արժեզրկվեց 14 տոկոսով: Սակայն այդ երկրի դրամական իշխանությունների կտրուկ գործողությունների հետևանքով ոչ միայն արագորեն կարգավորվեց իրավիճակը արժույթային շուկայում, այլև կանխվեց գների անկառավարելի թռիչքը: Նույնիսկ Բելառուսում ռուսական ռուբլու գերարագ անկման ֆոնին հնարավոր եղավ ապահովել բելառուսական ռուբլու՝ «գայջիկի» սահուն արժեզրկումը (շուրջ 16 տոկոս): Նույնպիսի կանխատեսելի ու սահուն արժեզրկման վարքագիծ դրսևորեց դազախական թենգեն: Այս հանգամանքը այդ երկրներում ապահովեց գների աճի նույնքան կանխատեսելի վարքագիծ:

Հայաստանում, սակայն, ճիշտ հակառակ պատկերն էր: Օգտվելով ՀՀ Կենտրոնական բանկի կրավորական կեցվածքից և որպես դրա հետևանք՝ դրամի «ազատ անկումից», գրեթե բոլոր վաճառողները, խոսքները մեկ արած, կտրուկ թանկացրին ապրանքները: Խուճապային օրերին առանձին ապրանքների և ծառայությունների թանկացումը տատանվում էր 10-40 տոկոսի սահմաններում: Եվ սա՝ նախաամանորյա գնումների խելահեղ մրցավազքի պայմաններում...

Թե՛ հարկային մարմինները և թե՛ տնտեսական մրցակցությունը կարգավորող

կառույցը այդպես էլ որևէ հողաբաշխ բացատրություն չտվեցին կատարվածի վերաբերյալ, միայն հայտարարելով, թե ... «ուսումնասիրություններ են կատարում»: Հասկանալի է, որ այսպես կոչված կայունացումից հետո էլ ո՛չ դրամի փոխարժեքը վերադարձավ նախկին մակարդակին, ո՛չ էլ առավել ևս՝ գները: Արդյունքում, եթե պարզ արտահայտվենք, աննախադեպ թանկացումների խորապատկերին տեղի ունեցավ եկամուտների, խնայողությունների և ամբողջության մեջ՝ ազգային հարստության անթաքույց վերաբաշխում հոգուտ նրանց, ովքեր մենաշնորհային ձևով տնօրինում են ապրանքների արտադրության, ներկրման և վաճառքի բոլոր լծակները:

Կարելի է, իհարկե, ենթադրություններ անել այն պարագայի շուրջ, թե Հայաստանի ֆինանսական ու տնտեսական իրավիճակի կայունացման հարցում համապատասխան կառույցների հապաղելը որքանով էր միտումնավոր ու կազմակերպված դիտավորության արդյունք: Սակայն մի բան ակնհայտ է. քանի որ ֆինանսատնտեսական ցնցումը հարուցվել է առաջին հերթին նավթի գների ու ռուսական ռուբլու անկման հետևանքով, մարդիկ նման աղետի պատճառները տեսնում են հենց եվրասիական ինտեգրման և հատկապես Ռուսաստանի հետ տնտեսական կապերի խորացման համատեքստում:

Այսպես թե այնպես, արևմտյան պատժամիջոցների շրջանակի ընդլայնումը և հետագա խորացումը իսկական աղետ կարող են դառնալ ինչպես ամբողջությամբ վերցրած ԵՏՄ երկրների, այնպես էլ նրա առանձին միավորների համար: Դա վերաբերում է առաջին հերթին Ռուսաստանին: Այդ երկրի առանց այդ էլ թույլ ու անմրցունակ տնտեսությունը կարող է փլուզվել պատժամիջոցների հարվածների տակ՝ դեպի անդունդը քաշելով նաև իր հետ տնտեսական դաշինք կազմած երկրներին: Այս պայմաններում կարող է շատ մեծ լինել խորհրդային տիպի գերկենտրոնացված ու գերռազմականացված տնտեսության մտակաղապարը վերակենդանացնելու գայթակղությունը: Համենայնդեպս՝ Ռուսաստանի տնտեսության ռազմականացումը և ռազմական ծախսերի աննախադեպ աճը ցույց են տալիս, որ այդ երկրի կառավարող շրջանակները իրավիճակի սրման և «սառը պատերազմի» իրողությունների ի հայտ գալու դեպքում չեն խորշի նկարագրված սցենարից:

Ռուսաստանի կառավարության բյուջետային ծրագրերի համաձայն՝ առաջիկա երկու տարիներին այդ երկրի ռազմական ծախսերը ավելանալու են 60 տոկոսով՝ 2016 թ. վերջին հասնելով երկրի ՀՆԱ-ի 4.1 տոկոսին, և սա այն դեպքում, երբ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ռազմական ծախսերը ընդամենը կազմում են ՀՆԱ-ի 2.5 տոկոսը: Սակայն, ինչպես ցույց է տալիս ԽՍՀՄ-ի փորձը, ռազմական ծախսերի այդօրինակ ուռձացումը ամենևին էլ չի երաշխավորում ռազմաքաղաքական անվտանգությունը, ընդհակառակը, պարզապես արյունաքամ է անում տնտեսությունը և նրան զրկում այնքան անհրաժեշտ արդիականացման ու զարգացման ռեսուրսներից:

5. Ի՞նչ կշահի և ի՞նչ կկորցնի Հայաստանը ԵՏՄ անդամակցությունից

Հայաստանի Հանրապետությունը ԵՏՄ-ին լիարժեք անդամակցության արդյունքում, ըստ էության, հարկադրված է լինելու առաջնորդվել ներքին շուկայի բավականին կոշտ պաշտպանության սկզբունքներով, քանզի այդպիսին են նոր կազմավորման շրջանակներում ընդունված խաղի կանոնները: Մինչդեռ, մինչ ԵՏՄ-ին անդամակցելը, Հայաստանը համարվում էր աշխարհի ամենից ազատական արտաքին առևտրային ռեժիմ ունեցող երկրներից մեկը: Բավական է նշել, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում գործող՝

Առևտրի առավելագույն բարենպաստության ռեժիմ ունեցող երկրների շարքում Հայաստանն ունի ամենացածր ներմուծման միջին կշռված մաքսատուրքը (2.8 տոկոս): ԱՀԿ անդամ երկրների հետ ունեցած առևտրում ՀՀ-ն ներմուծվող ապրանքներից ընդհանրապես մաքսատուրք չի գանձում¹³:

Եթե դատելու լինենք պաշտոնական փաստաթղթերից, ապա առաջիկա տասնամյակը Հայաստանի տնտեսության համար լինելու է իսկական ոսկե ժամանակահատված: Ահավասիկ, այդպիսի դրական կանխատեսումներ են ներառված ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր կոչվող փաստաթղթում: Այնտեղ սևով սպիտակին գրված է, որ առաջիկա 12 տարիների ընթացքում ՀՀ տնտեսությունը կշարունակի զարգանալ կայուն տեմպերով՝ տարեկան ապահովելով համախառն ներքին արդյունքի 5.5-6.5 տոկոս աճ: Սրա արդյունքում բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշը՝ մեկ շնչի հաշվով եկամուտը, կերկնապատկվի՝ 2025 թ. հասնելով 9500 դոլարի¹⁴: Նույն փաստաթղթի համաձայն՝ առաջիկա տասնամյակում Հայաստանում գնաձր կգտնվի ցածր ու կառավարելի տիրույթում՝ հանգրվանելով 4 տոկոսի սահմաններում, դինամիկ կերպով կաճեն ներդրումները՝ հասնելով երկրի ՀՆԱ 26-27 տոկոսի մակարդակին¹⁵:

Թերևս առավել լավատեսական են ներկայիս կառավարության այն կանխատեսումները, որոնք անմիջականորեն առնչվում են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության տիրույթում արտաքին առևտրում կատարվելիք փոփոխություններին: Գաղտնիք չէ, որ ներկայումս երկրի արտաքին առևտրում ներմուծումը շուրջ 3.5 անգամ գերազանցում է արտահանմանը, ինչն ահռելի մեծ ծավալի արտարժույթի պահանջարկ է հարուցում նշված երկու հատվածների միջև առկա մեծ խզումը ծածկելու համար: Այս առնչությամբ կառավարության կանխատեսումը ավելի քան լավատեսական է:

Նախատեսվում է, որ մինչև 2025 թ. կտրուկ կաճի ՀՀ-ից արտահանման մասնաբաժինը երկրի համախառն ներքին արդյունքի մեջ ու ներկայիս 23.7 տոկոսից կհասնի 37.4 տոկոսի, իսկ ներմուծման մասնաբաժինը, ընդհակառակը, կտրուկ կնվազի՝ ներկայիս 47.3 տոկոսից կիջնի մինչև 39.2 տոկոսի¹⁶: Ենթադրվում է, որ արտաքին առևտրի ընդլայնումը տեղի է ունենալու նոր ներդրումների և դրանց հիման վրա բարձր արտադրողական աշխատատեղերի ստեղծման ճանապարհով: Սակայն խնդիրն այն է, որ ՀՀ տնտեսության զարգացումը սահմանափակող հանգուցային գործոնները, հատկապես տրանսպորտային շրջափակումը շարունակելու են աքցանի մեջ պահել երկրի տնտեսական համակարգը և վիժեցնել հեռանկարային ներդրումային ծրագրերի իրականացումը: Այլ հարց է, որ ժամանակի ընթացքում եթե ինչ-որ կերպ (կամ ինչ-որ հրաշքով) կարգավորվեն վրաց-աբխազական հարաբերությունները, և արխազական երկաթգիծը վերագործարկվի, դա կտրուկ կմեծացնի ՀՀ տնտեսության ծավալման ու զարգացման հնարավորությունները:

Անկասկած, առաջնորդվելով զուտ պրագմատիկ չափանիշներով՝ կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով ԵՏՄ կառույցին, հնարավորություն է ստանում արտոնյալ, շուկայական սակագներից զգալիորեն ցածր սակագներով էներգակիրներ, մասնավորապես բնական գազ ներկրել Ռուսաստանի Դաշնությունից: Այլ հավասար պայմաններում դա հայկական ընկերություններին հնարավորություն կտա ոչ միայն հավասար տնտեսական պայմաններով մրցակցել ԵՏՄ տնտեսական միավորների հետ, այլև զգալիորեն թեթևացնել հայաստանյան շաքային սպառողի խնդիրները: Այլ հարց է, որ վերջնա-

13 Տե՛ս http://edrc.am/images/Useful_Publications/aer_2014_arm.pdf

14 Տե՛ս ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, էջ 27.<http://www.gov.am/files/docs/1322.pdf>

15 Տե՛ս նույն տեղում, էջ 28-29: <http://www.gov.am/files/docs/1322.pdf>

16 Տե՛ս նույն տեղում, էջ 32: <http://www.gov.am/files/docs/1322.pdf>

կան սպառողի համար այդ սակագները շարունակում են բավականին բարձր մնալ:

Այդուհանդերձ, ՀՀ կառավարությունն իր հեռահար ծրագրերը մշակելիս հաշվի է առել, որ երկարաժամկետ հեռանկարի համար կանխատեսվող բնագծերը պետք է ձեռք բերվեն մեծ անորոշությունների ու բարձր ռիսկերի պայմաններում: Այդ տեսակետից, որոշակի ներքին ռիսկերի հետ մեկտեղ, զգալի դեր են խաղալու նաև արտաքին ռիսկերը, որոնց մի մասը պայմանավորված է լինելու հենց ԵՏՄ-ին անդամակցությամբ: Թերևս ճիշտ են կառավարական շրջանակների այն կասկածները, որ ԵՏՄ-ին անդամակցության արդյունքում Հայաստանը կկորցնի գրավչությունը եվրոպական ներդրողների համար, եվրասիական կազմավորմանը հարելու հետևանքով որոշակի խնդիրներ կծագեն Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում երրորդ երկրների հետ առևտրի պայմանների վատացման պատճառով և այլն:

Թերևս ԵՏՄ անդամակցության պայմաններում լրջագույն խնդիրներ կարող են ստեղծվել նաև երկրի բյուջետային համակարգի ու արտաքին պարտքի կառավարման տեսակետից: Ակնհայտ է, որ Հայաստանի հիմնական դոնոր հանդիսացող միջազգային ֆինանսական կառույցները (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ, Եվրոբանկ և այլն) կդադարեն նույնքան առատաձեռն գտնվել ու շարունակել արտոնյալ վարկային ռեսուրսներով բավարարել ՀՀ կառավարության պահանջները: Այդ խողովակներով եկող վարկային միջոցները ակնհայտ է, որ թանկանալու են: Հետևաբար Հայաստանը պետք է փնտրի արտոնյալ վարկերի այլընտրանքային աղբյուրներ: Այս պարագայում Ռուսաստանից նոր վարկեր ներգրավելու տարբերակները ավելի քան խնդրահարույց են լինելու:

«Գույք՝ պարտքի դիմաց» բանաձևի ցավալիորեն հայտնի իրողությունները պետք է որ պարտադրեն լինել ավելի սթափ ու շրջահայաց՝ Ռուսաստանից նոր վարկեր ներգրավելու հարցում: Փաստն այն է, որ այդ երկրից վերցված բոլոր նախորդ վարկերի հետվերադարձը չափազանց թանկ է նստել Հայաստանի բյուջեի և ժողովրդի վրա: Ահավասիկ, Ռուսաստանին ունեցած ընդամենը 100 միլիոն դոլար պարտքի դիմաց Հայաստանի Հանրապետությունը 2002 թ. ստիպված եղավ վճարել իր առանցքային նշանակության մի շարք ձեռնարկություններով: Պարտքի դիմաց հայկական կողմի առաջարկած ցուցակից Ռուսաստանը ընտրել էր չորսը՝ Հրազդանի ԶԷԿ-ը և էլեկտրոնային արդյունաբերության երեք ձեռնարկություն՝ «Մարս» գործարանը, Կառավարման ավտոմատացված համակարգերի և Նյութաբանության գիտահետազոտական ինստիտուտները: Ինչպես ասում են՝ դժվարը սկիզբն էր: Հետագայում Ռուսաստանը կլանեց Հայաստանի համար ռազմավարական նշանակության բազմաթիվ օբյեկտներ՝ բաշխիչ էլեկտրացանցերը, գազաբաշխման համակարգը, կապի համակարգը, երկաթգիծը, Սևան-Հրազդան հիդրոկայանների կասկադը: 2008-2009 թթ. ճգնաժամի տարիներին կուտակված 500 միլիոն դոլար ռուսական վարկային պարտավորությունը մարելու համար Հայաստանը ստիպված եղավ խիստ ծանր պայմաններով՝ արժեթղթերի եվրոպական շուկաներից (եվրաբոնդերի շուկա) պարտք վերցնել, թեև ռազմավարական դաշնակիցը հանգիստ կարող էր վերակառուցել այդ պարտքը ու հետաձգել վճարումը:

Նաև հայտնի է, որ խիստ կասկածելի պայմաններում ռուսական գազամատակարար «Գազպրոմ» ընկերությանն ունեցած 300 միլիոն դոլարի պարտքը մարելու համար ՀՀ կառավարությունը ստիպված եղավ ռուսական կողմին զիջել «Հայռուսգազարդում» իր ունեցած վերջին՝ 20 տոկոս բաժնեմասը: Այս գործարքը, ըստ էության, նշանակում է ռուսական պետական գազամատակարար ընկերությանը օժտել բացարձակ մենաշնորհով, եթե հաշվի առնենք նաև այն, որ այդ ընկերությանն է պատկանում Իրան-Հայաստան գազատարը, որն, ի դեպ, նույն-

պես փոխանցվել է պարտքի դիմաց: Մեկ հատկանշական իրողությունն է: ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնությունը տասնյակ միլիարդավոր դոլարների հասնող պարտքեր է զիջել նախկին ԽՍՀՄ-ի բազմաթիվ բարեկամ երկրների (Կուբա, Իրաք, Մոզամբիկ, Անգոլա, Եթովպիա, Վիետնամ և այլն): Մինչդեռ Հայաստանը շատ հեռու է պահվել այդօրինակ «բարեկամ» երկրների ցուցակներից՝ ունենալով երկրաշարժից, պատերազմից ու տնտեսական ցնցումներից քայքայված, արյունաքամ եղած և կազմալուծված տնտեսություն:

Այնհայտ է, որ տասնամյակների ընթացքում Ռուսաստանին զիջելով իր էներգետիկ ու համապետական նշանակության մյուս օբյեկտները, Հայաստանը միակողմանի կախվածության մեջ է հայտնվել ֆորմալ առումով ռազմավարական դաշնակից համարվող այդ երկրից: Այս հանգամանքը, թերևս, կարող է էապես նվազեցնել ազգային անվտանգության շահերից բխող ռազմավարական որոշումներ կայացնելու՝ Հայաստանի հնարավորությունները: ԵՏՄ անդամակցությունը այս տեսակետից կարող է էլ ավելի վատթարացնել առկա կացությունը: Մանավանդ որ, այդպիսի օրինակներ արդեն ի հայտ են գալիս: Խոսքը վերջերս ընդունված մի կառավարական որոշման մասին է, որը վերաբերում է Մեծամորի ատոմակայանի տեխնոլոգիական վերազինման ու նրա գործողության ժամկետը երկարացնելու նպատակով Ռուսաստանից 270 միլիոն դոլար վարկի ստացմանը: Մի կողմից՝ դեռևս մեծ հարց է, թե իր ծառայության ռեսուրսները գրեթե ամբողջապես սպառած ԱԷԿ-ի ինչը պետք է վերակառուցվի: Մյուս կողմից՝ ԱԷԿ-ի կառավարման շուրջ ծագած ֆինանսական սկանդալները և այդ կարևորագույն օբյեկտի առանցքային պաշտոնյաների հեռացումը (նաև՝ յուրացումների հարցով քրեական գործերի հարուցումը) վկայում են, որ նմանօրինակ վարկային միջոցները հաճախ փոշիացվում են և իրենց նպատակին չեն ծառայում:

Կարելի է ասել նաև, որ ԵՏՄ-ին ՀՀ անդամակցության արտադրական արդյունքները նոր աշխատատեղերի ստեղծման տեսքով գոնե մոտակա կամ տեսանելի հեռանկարում խիստ սահմանափակ են լինելու: Ըստ էության մաքսասակագնային սահմանափակումների կամ խոչընդոտների վերացումը առանձնապես մեծ բան չի տալու, քանի որ ԵՏՄ անդամ երկրների հետ Հայաստանը վաղուց ունի ազատ առևտրի ռեժիմ, ու փաստորեն, նոր կարգավիճակը կարձաժամկետ հատվածում էական փոփոխություններ չի հարուցի: Այլ է խնդիրն այսպես կոչված ոչ սակագնային կարգավորման ռեժիմների փոփոխության պարագայում բացվող նոր հնարավորությունների դեպքում: Այդպիսի կարգավորումներն ունակ են հնարավոր դարձնելու ներքին շուկայի պաշտպանության որոշ տարրերի կիրառումը, ինչը կայացման փուլում գտնվող արտադրությունների համար կարող է ժամանակավոր ցատկահարթակ ծառայել ու նպաստել մրցունակ նոր աշխատատեղերի ստեղծմանը և ԵՏՄ շուկայում հարմար դիրքավորմանը:

Թերևս մեկ հնարավոր փոփոխությունն է չի կարելի այքաթող անել: Գաղտնիք չէ, որ Հայաստանի տնտեսության բազմաթիվ ոլորտներ, ներառյալ ներկրումները, զգալիորեն մենաշնորհացված են: ԵՏՄ ընդհանուր շուկայի ձևավորմամբ Հայաստանի տնտեսության նշված ոլորտները ենթարկվելու են մրցակցային ճնշման, ինչի հետևանքով մենաշնորհները որոշակիորեն նահանջելու են, և, որպես հետևանք, նվազելու են այդ բնագավառներում թողարկված ապրանքների գները կամ մատուցված ծառայությունների սակագները: Դրանից, անշուշտ, սպառողները կշահեն: Սակայն խնդիրն ունի նաև հակառակ երեսը: Զարգացման նշված սցենարի դեպքում հնարավոր է՝ տեղական ոչ մրցունակ արտադրությունների մի մասը փոխարինվի ներմուծումներով, և այդ պատճառով կորսվի աշխատատեղերի մի մասը: Բացի այդ, շուկաների ընդարձակման պարագայում բարձր որակավորում ունեցող աշխատուժը կարող է շարունակել հեռանալ երկրից:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, 2014
հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4 (48)

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ՎԷՆ համահայկական հանդես

ԵՏՄ անդամակցության հնարավոր հետևանքների մեջ պետք է նկատի ունենալ նաև գների համընդհանուր բարձրացումը: Այն ակնկալիքը, թե գնաձի ցուցանիշը երկարաժամկետ հեռանկարում կմնա 4-5 տոկոսի սահմաններում, դժվար հասանելի է: Գները ամենայն հավանականությամբ ավելի մեծ չափով կաճեն նախ՝ մաքսատուրքերի բարձրացման, երկրորդ՝ ԵՏՄ անդամ մյուս երկրներում գնաձի բարձր մակարդակի ազդեցությունների հետևանքով: Տարբեր գնահատումներով՝ գների մակարդակը Հայաստանում աստիճանաբար բարձրանալով՝ ի վերջո, կկայունանա 8-12 տոկոսի սահմաններում:

Չպետք է բացառել նաև ապրանքների բազմազանության, դրանց որակի և անվտանգության ու մատչելիության անկման դրսևորումները: Երրորդ երկրների հետ ունեցած առևտրի սահմանափակումները հանգեցնելու են ապրանքների փոխարինելիության անկման և որպես հետևանք՝ գների բարձրացման: Բնականաբար, երրորդ երկրներից ներկրվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի բարձրացումը հանգեցնելու է ԵՏՄ երկրներից նույն ապրանքների ներմուծման ավելացմանը, ինչը թե՛ որակական և թե՛ գնային առումով դժվար թե նպաստավոր լինի սպառողների համար: Թերևս նույն վիճակը կարող է ստեղծվել երրորդ երկրներից հումքի և կապիտալ միջոցների հանդեպ (մեքենասարքավորումներ, հաստոցներ, փոխանցող հարմարանքներ և այլն) մաքսատուրքերի բարձրացման դեպքում: Այս հանգամանքը կարող է լրջորեն հարվածել ներդրումներին ու կրճատել դրանց ծավալները:

Վերջաբանի փոխարեն կամ հայացք ԵՏՄ ապագային

Հայաստանի Հանրապետության անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը բազմաթիվ ռիսկեր է պարունակում, ուստի ԵՏՄ շրջանակներում արդեն 2015 թ. սպասվող զարգացումները կարող են լրջագույն փոփոխություններ հարուցել նրա անդամ հանդիսացող երկրներից յուրաքանչյուրում: Մեծ հաշվով այս նոր տարածաշրջանային կազմավորման ու նրա շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացների հետ կապված՝ կարող են իրականանալ երկու հիմնական սցենարներ՝ **լավատեսական (դրական)** և **հոռետեսական (բացասական)**: Անշուշտ, այս սցենարները խիստ պայմանական են, սակայն ըստ էության ամբողջության մեջ կարող են ուրվագծել զարգացման երկու հիմնական վեկտորներ: Ներկայացնենք այդ պայմանական սցենարները առանձին-առանձին:

I. Լավատեսական սցենար

Այս սցենարի իրագործման հավանականությունը, կարելի է ենթադրել, այնքան էլ մեծ չէ: Սակայն ոչինչ չի կարելի բացառել, եթե նկատի ունենանք, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ինչպես այդ ընդարձակ տարածաշրջանում, այնպես էլ նրա սահմաններից շատ ու շատ հեռու ընկած երկրներում ծավալված զարգացումների սահմոկեցուցիչ փաստերը հարկադրում են քաղաքական որոշումներ ընդունող վերնախավերին առաջնորդվել պրագմատիզմի ու ողջամտության սկզբունքներով: Դրան են հարկադրում նաև «սառը պատերազմի» ժամանակների իրողությունները, և հատկապես՝ սպառազինությունների անիմաստ ու խելահեղ մրցավազքի դառը փորձը, ինչը ահռելի քանակի ռեսուրսներ կլանեց և այդքան մասով սահմանափակեց ազգերի ու ժողովուրդների հարստությունն ու բարեկեցությունը: Բոլոր դեպքերում ԵՏՄ շրջանակներում **լավատեսական սցենարի** դրսևորումը պետք է մի շարք զարգացումներ ենթադրի.

Ա. Այս պարագայում պետք է ենթադրել, որ նախ և առաջ՝ ԵՏՄ-ն գոտևորող տարածաշրջաններում հակասությունները կնվազեն, ու դրանց հետ կապված քիչ թե շատ տանելի աշխարհաքաղաքական ու ռազմավարական համաձայնություն

(կոնսենսուս) կձևավորվի: Սա վերաբերում է առաջին հերթին Ուկրաինայում տիրող իրավիճակին: Դա կապված է ինչպես պաշտոնական Կիևի և Դոնեցկի ու Լուգանսկի ինքնահռչակ իշխանությունների միջև համաձայնությունների ձեռքբերման և խնդրի քաղաքական կարգավորման, այնպես էլ Ղրիմի հետ կապված միջազգային ինչ-ինչ համաձայնությունների կայացման հետ: Այս հանգամանքը իր հերթին կնպաստի Ռուսաստանի տնտեսության վրա ռազմաարդյունաբերական համալիրի ճնշման թուլացմանը, տնտեսության ռազմականացման մակարդակի իջեցմանը, կկանխի միջոցների անմիաստ ու անարտադրողական օգտագործումը և հնարավորության կտա այդ ռեսուրսները ուղղորդել տնտեսության արդիականացման ծրագրերի իրականացմանը:

Բ. Վերոնշյալ զարգացումները իրենց հերթին պետք է հանգեցնեն Ռուսաստանի նկատմամբ կիրառվող ինստիտուցիոնալ և տնտեսական պատժամիջոցների սահմանափակմանը կամ իսպառ վերացմանը, ինչը վերստին կազատականացնի շուկաները, կնպաստի ապրանքների, կապիտալի, աշխատուժի և տեխնոլոգիաների ազատ տեղաշարժին, ինչը նոր խթան կդառնա ԵՏՄ երկրների տնտեսական աճը, ներդրումները և բարձր տեխնոլոգիական հենքի վրա տնտեսության արդիականացումը խթանելու համար:

Գ. Կոնֆլիկտային տարածաշրջանների պատճառով ծագած աշխարհաքաղաքական լարվածության թուլացումը նավթ արդյունահանող ու վաճառող երկրներին կհարկադրի նավթի գների ու վաճառահանման քվոտաների հարցում ավելի համաձայնեցված ու փոխադարձորեն ընդունելի քաղաքականություն վարել: Իսկ դա պետք է որ հանգեցնի նավթի այնպիսի գների գոյացմանը, որոնք հավասարապես ընդունելի են թե՛ նավթ վաճառող և թե՛ այն գնող երկրների ու ընկերությունների համար: Նման պարագայում պետք է բացառվի նավթի գների արհեստական իջեցումը որպես ռազմավարական կամ աշխարհատնտեսական ճնշվածակ օգտագործելը՝ այս կամ երկրին (կամ երկրների խմբին) ծնկի բերելու ու նրա տնտեսությունը կազմալուծելու համար: Խոսքը առաջին հերթին վերաբերում է Ռուսաստանին, որի պետական բյուջեի եկամուտների կեսից ավելին ձեռք է բերվում էներգակիրների վաճառքից գոյացած միջոցներից:

Դ. Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների վերացումը կխթանի փոխադարձ առևտուրը ԵՏՄ շրջանակներում և հնարավորություն կտա այն կազմակերպել գնագոյացման բնականոն արժեչափերի համակարգում, ինչը թույլ կտա իրական ու ռացիոնալ ազդակներ և խթաններ հաղորդել այդ տնտեսական կազմավորման շրջանակներում գործող ընկերություններին: Ներքին տնտեսական կապերի կայունացումը և առևտրի ծավալումը նաև պետք է հանգեցնի ինչպես ԵՏՄ երկրների պետական եկամուտների, այնպես էլ մասնավոր ընկերությունների ու անհատ քաղաքացիների եկամուտների, հետևաբար՝ բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Ե. ԵՏՄ երկրների տնտեսությունների վրա քաղաքական ճնշումների թուլացումը պետք է հանգեցնի դրանց ֆինանսական համակարգերի կայունացմանը, ազգային արժույթների որոշակի ամրապնդմանը և դրանց փոխարժեքների շարժի կանխատեսելիության աստիճանի բարձրացմանը: Սա իր հերթին կբերի բիզնես միջավայրի բարելավմանը, ինչպես նաև ներդրումների խթանմանը: Ռուսական ռուբլու կայունացումը շղթայական ռեակցիայի սկզբունքով, բնականաբար, կհանգեցնի ԵՏՄ մյուս երկրների արժույթների, այդ թվում՝ ՀՀ դրամի կայունացմանը: Պատժամիջոցների վերացումը վերստին մատչելի ու հասանելի կդարձնի արևմտյան ֆինանսական ռեսուրսները ԵՏՄ ընկերությունների և Ռուսաստանի մասնավոր ու պետական կառույցների համար, ինչը թույլ կտա բնականոն կերպով մարել (կամ՝ սպասարկել) կուտակված պարտքերը, կամ դրանք օգտագործել որպես շահավետ ներդրումների աղբյուրներ:

II. Հոռետեսական սցենար

Այս սցենարի իրականացման հավանականությունը շատ ավելի մեծ է, քան լավատեսական սցենարինը, որովհետև այս պահի դրությամբ ԵՏՄ կազմավորման շուրջ ծավալվող իրադարձությունների բացասական ազդակներն ավելի շատ են, քան դրականները: Քանզի Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների հակված և այդ հարցում «շոգեքարշի» գործառույթ իրականացնող գերտերությունը՝ ԱՄՆ-ը, առայժմ տրամադրված է ոչ միայն պահպանելու սահմանված պատժամիջոցները, այլև դրանք «հարստացնելու» նորերով: Բոլոր դեպքերում **հոռետեսական սցենարը** ենթադրում է.

Ա. ԵՏՄ տարածաշրջանում և նրա շուրջ առկա տարածայնությունների, հակասությունների ու բախումների հետագա խորացում: Հատկապես՝ Ուկրաինայում տեղի ունեցող արյունալի իրադարձությունների նոր ալիքի բռնկում և նրա վերածում լայնամասշտաբ պատերազմական գործողությունների: Այս պարագայում կտրուկ կվատթարանա տնտեսական և սոցիալական իրավիճակը թե՛ ԵՏՄ անդամ պետություններում, թե՛ նրանց հարակից երկրներում և թե՛ բուն Ուկրաինայում: Նման պայմաններում կխորանան ԵՏՄ շրջանակներում առկա կենտրոնախույս միտումները, ու չի բացառվում, որ այդ կառույցը դադարեցնի իր գոյությունը կամ շարունակի ձևական գոյությունը քարշ տալ՝ սոսկ բավարարելով Կրեմլի քաղաքական ամբիցիաները:

Բ. ԵՏՄ շրջանակներում անդամ երկրների միջև փոխադարձ անվստահության և առկա ռիսկերի մակարդակի բարձրացում, ինչը, ավելացնելով անորոշությունների դաշտը, կխանգարի բնականոն ինտեգրման գործընթացներին, հատկապես կխոչնդոտի համաձայնեցված ու համակարգված տնտեսական քաղաքականության իրականացմանը: Այս պարագայում կշարունակվի ԵՏՄ երկրների նկատմամբ խտրական սահմանափակումների գործադրումը, ինչը կփոխակերպվի ներքին հակասությունների, անդամ երկրների միջև փոխադարձ անվստահության, միմյանց հանդեպ տարիֆային և հատկապես՝ ոչ տարիֆային սահմանափակումների գործադրման: Այն, ինչ որ այսօր տեղի է ունենում Ռուսաստան-Բելառուս կամ Ռուսաստան-Ղազախստան հարաբերություններում և, ըստ էության, հատվածական բնույթ է կրում, այդպիսի իրավիճակում կարող է դառնալ հանրնդգրկուն և կաթվածահար անել նոր կազմավորման շրջանակներում սկզբնավորվող կապերի և ընդունվող որոշումների ողջ համակարգը:

Գ. Էներգակիրների և հատկապես նավթի համաշխարհային շուկայում իրավիճակը ոչ միայն չի կարգավորվի, այլ մի բան էլ կվատթարանա: Հնարավոր է, որ նավթի ու նավթամթերքների շուկայում տոն տվող երկրների սինդիկատի՝ ՕՊԵԿ-ի, և այդ շուկա մուտք գործած նոր խաղացողների միջև այդպես էլ համաձայնություն չկայանա, և այդ պայմաններում նավթի գների հետագա անկում արձանագրվի, ինչը աղետալի հետևանքներ կունենա թե՛ Ռուսաստանի ու Ղազախստանի և թե՛ ավանդաբար նավթ վաճառող մյուս երկրների համար՝ կրճատելով նրանց արտարժույթային եկամուտները և որպես հետևանք՝ արժեզրկելով ազգային արժույթներն ու հանգեցնելով գնաձային թռիչքների և ֆինանսական փլուզման: Իսկ դա կարող է լրջորեն սրել սոցիալական իրավիճակն այդ երկրներում՝ հանգեցնելով սոցիալական լարվածության կտրուկ աճի, ներքաղաքական բախումների ու իշխանափոխությունների: Բացի դա, նավթի ու գազի գների շուրջ ընթացող աշխարհաքաղաքական խաղերը կարող են նպաստել այդ էներգակիրների գծով Ռուսաստանի վաճառահանման վեկտորի կտրուկ վերաուղղորդմանը: Դա արդեն մասամբ տեղի է ունենում ռուսական գազը դեպի Եվրոպա արտահանման «Հարավային հոսք» բազմամիլիարդ ծրագիրը դադարեցնելու և գազի խողովակը դեպի Թուրքիա ուղղելու, ինչպես նաև ռուսական նավթը դեպի Չինաստանի օրավոր աճող պահանջարկի բավարարմանն ուղղելու, նույնքան մասշտաբային ներդրումային ծրագրերի տեսքով:

Դ. Արևմտյան պատժամիջոցների հետագա խորացումը կարող է լրջորեն սահմանափակել ու որոշակի առումով բացառել ԵՏՄ անդամ երկրների ֆինանսական ճեղքվածների ու հատկապես արտաքին պարտքի սպասարկումը: Դա առավել ծանր կանդիդատնա Ռուսաստանի ֆինանսական համակարգի և ամբողջությամբ վերցրած՝ տնտեսության վրա, որն այդ իրավիճակում ստիպված կլինի դիմելու նախընթաց ժամանակահատվածում՝ նավթի բարձր գների պայմաններում, կուտակված հարյուր միլիարդավոր դոլարի հասնող Ազգային պահուստային հիմնադրամի և Ազգային բարեկեցության հիմնադրամի միջոցների օգտագործմանը: Դրանց հետագա սպառմանը, ինչպես նաև Ռուսաստանի կենտրոնական բանկի արտարժույթային և ոսկու պաշարների մաշեցմանը զուգահեռ կարող են լրջորեն սրվել հարաբերությունները Ռուսաստանի պաշտոնական և մասնավոր դոնորների ու վարկատուների հետ, ինչը աղետալի հետևանքներ կունենա ինչպես բուն Ռուսաստանի, այնպես էլ նրա հետ իրենց բախտը կապած ԵՏՄ մյուս գործընկերների, այդ թվում՝ Հայաստանի համար:

Ե. Առկա է որոշակի ռիսկ, որ ԵՏՄ անդամակցության պարագայում, երբ կբարձրանան երրորդ երկրներից, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, ԵՄ-ն նույնն էլ կանի Հայաստանի նկատմամբ: Մասնավորապես՝ Հայաստանից արտահանվող ապրանքների համար ԵՄ-ն կիրառում է GSP+ առևտրային ռեժիմը, ինչը նշանակում է, որ հայաստանյան մոտ 6 հազար անուն ապրանքների նկատմամբ կիրառվում են ցածր մաքսատուրքեր: Ի դեպ, նման ռեժիմ ԵՄ-ն կիրառում է 9 երկրի նկատմամբ: Դրա վերացումը կարող է հանգեցնել Հայաստանից դեպի ԵՄ շուկա արտահանումների կրճատմանը¹⁷:

Ատոմ Շ.Մարգարյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ինստիտուցիոնալ փոխակերպման, տնտեսության մակրոտնտեսական կարգավորման, նորաստեղծական արդիականացման և միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնահարցերը: 3 մենագրությունների, 3 գիտամեթոդական և ուսումնական ձեռնարկների, 60-ից ավելի գիտական հոդվածների, շուրջ 200 հրապարակախոսական հոդվածների ու տնտեսության տարբեր հիմնախնդիրներին վերաբերող վերլուծական նյութերի հեղինակ է: Բազմաթիվ հրապարակումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում, և ներկայացրել է Հայաստանի տնտեսության տարբեր հիմնախնդիրներին վերաբերող զեկուցումներ:

Գիտահետազոտական ծրագրեր է իրականացրել մի շարք գերմանական համալսարաններում (Կոնստանցի համալսարան՝ 1991, Աուգսբուրգի համալսարան՝ 1992, 2009 թթ., Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարան՝ 2013 թ.):

17 Հոդվածը պատրաստվել է հայ-բելառուսական համատեղ № 13ՔԵ-059 գիտական նախագծի շրջանակներում:

Summary

THE EURASIAN ECONOMIC ALTERNATIVE: At the boundary of opportunities and challenges

Atom Sh. Margaryan

The Eurasian economic union (EEU) is the high form of integration between member countries aimed towards development of a single market space. It involves not just establishment of a customs union but also agreed upon and common economic policies in certain areas. The Republic of Armenia as a small country is anyhow forced to be a part of this process. The article does not include all the potential risks and benefits of accession to the Eurasian economic union. However, there are pros and cons that are evident at this stage of the process. This is an expanding market, inflationary potential, impact on budget revenues, the labor market, relations with third countries, investment opportunities. Entry into the EEU a good reason for Armenia to rethink their international economic relations: the balance of trade issues, promoting local producers. At the same time, there are so-called governance and institutional risks associated with the administration of the new system, the qualifications and awareness of officials and businesses.

Резюме

ЕВРАЗИЙСКАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ АЛЬТЕРНАТИВА: На рубеже возможностей и угроз

Атом Ш. Маргарян

Евразийский экономический союз (ЕАЭС) является высокой формой интеграции между странами-членами, направленной на развитие единого рыночного пространства. Она включает в себя не только создание Таможенного союза, но также создание системы согласованной и скоординированной экономической политики в определенных сферах. Республика Армения как маленькая страна так или иначе вынуждена быть частью этого процесса. Статья не включает в себя все возможные риски и преимущества присоединения Армении к Евразийскому экономическому союзу. Тем не менее, есть свои плюсы и минусы, которые проявляются на данном этапе процесса. Это растущий рынок, инфляционный потенциал, влияние на доходы бюджета, на рынок труда, отношения с третьими странами, инвестиционные возможности. Вступление в ЕАЭС хороший повод для Армении пересмотреть свои международные экономические отношения: баланс торговли, содействие местным производителям. В то же время, существуют так называемые управленческие и институциональные риски, связанные с введением новой системы, с квалификацией и информированностью должностных лиц и предприятий.